

վերջին բարեկամն այս աշխարհին մէջ...
Սեղմեց գըրկումը պինդ, պինդ անվախճա՛ն:
Շունը առաջնորդ եղաւ եղօին,
հա հետեւեցաւ նըրան գըլխիկոր...
Այն ո՛վ է այնտեղ արցունք է թափում
Մի շիրմի առջև՝ սիրտով վիրաւոր...

*
* *

Դագու՛մ է ահա՛ արևը պայծառ,
Համբոյր է տալիս ծաղկոտ սաբերին,
Ուրտեղ մանկութեան օրերումը վառ
Եղօի զուարթ երգերն լըսուեցին:
Բայց ո՛վ է այնտեղ, մի ծառի տակին
Մի շիրմի առջև արցունք է թափում.
Ասէ՛ք, օ՛, ասէ՛ք, այն ո՛վ է այնտեղ
Մի մանկան նըման տըխու՛ր, հեկեկում...
Այն ո՛վ է այնտեղ սե երգ է կանչում.
«Մայրիկ, ես եկայ, — օճախը մարած —,
Բաց քո թեկերը, թո՛ղ հողի զըրկում
Էս սիրտը լըռի քեզ պի՛նդ պինդ սեղմած...»

ԱՐՄԵՆ ԵՐԿԱՅԵ

ԱՂՈՒԷՄՆ ՈՒ ԴԵՌԱՍԻ ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԸ

Դէմքով բարի, համակրելի, իր նպատակին
Հասնելու չափ քաջ համբերող,
Աղուէս մը կար կեղծել գիտցող՝
Եւեւ ցորչափ յատուկ ձերքն էր ողջ իւր ցեղին:
Կազմ է պատրաստ տի ի կապուտ ե կողոպուտ
Դրացւոց իւրոց դարանամուտ:
Հա մի գիշեր հանոց մ'ամբողջ կուլ տուած էր,
Առաւօտուն ես եկած էր՝
Ուրախ զըւարթ դաշտի վերայ ըսբօսնելու,
Դափնէ ծառի տակ հանգչելու,
Ջիւղը հերոս մի որ ի խազմէն արինազայր
Վայրիկ մ'ուզէր առնել դադար:
Դաշուն էր այն ինչ դաշտազանդ, շոգեպարար.
Որորտեղով աղուէսն ի նա ման կու գար:
Արշալուիկն արցունքերը կը մաղուէին,
Կը հեշտանար սիրտն ու փորը կուշտ աղուէսին.
Թաւալզըրը մերթ նա կուգար մէջ եղեամբին,
Դըռոյթ կու տար, պարզէր, ծալէր մերթ գիւր
(ազին.
Ազինն հետ խաղ էր սարքում, հիւրդ մի մանուկ,
Աղուէսն այն հին օձի բըղուկ:
Անդին երկու ձագ նապաստակ ես խաղային,
Ի գիւ ի վէզ մերթ կու գային դաշտին վերայ,
Մերթ ալ նըստած յետին թեթի թաթից վերայ,

Միմեանց ողջոյն, նաև համբոյր շատ կու տային.
Հապա յաւէտ սիրայորդոր
Ճաշ առնէին թիւմ է ծոթոր:
Մէկ մ'ալ տեսան՝ տուտին ի ժած հովահրելով՝
Աղուէսն անդին ժուռ գալով:
Հայուըտեցան շուտ մ'իրարու ե լուռ կեցան,
Խորհուրդ ի մէջ առին հապա, դեղեցան,
Մի փորձ արին, գնացին առաջ մի քայլ, երկու,
Եւ փորձն ի խրատ եղաւ նոցա շուտ փախչելու:
Յայնժամ աղուէսն հայեց աչօք յոյժ սիրարկու,
Մինչև թուկեց այն անմեղուկ ձագերն երկու,
Որ անգիտակ նենգաւորաց չար արուեստին՝
Մնացին կառչած ի նոյն տեղին:
«Եւ տես ինձ արդ, անոնցմէ մին,
Ի՜նչ գեղեցիկ աչքիւ ունի, կ'ըսէ միւսին,
Ի՜նչպէս անոյշ մեզ կու նայի, գորովալի՛,
Մեզի համար սիրով հալի:
Ի՞նչ վախ կայ. օ՛ն»: Եւ շուտ մը հոն,
Վախն անտեսմէ կ'ըլլայ ցըրօն:
Մի ե երկու առաջ կ'երթան քայլ առնելով,
Տատամսելով, լըրտեսելով.
Քանի կ'երթան, այն անօրէն կենդանին ալ
Կ'անցընէ իւր կեղծաւոր դիմացը փայլ:
Մինչ զի վըստահ ե ապահով ե կայտուելով՝
Կը մօտենան աղուէսին քով
Եւ սա շոյում, ըստ կարելոյն լ'ամէն կերպով
Լէցնում է զայնս խընդութիւնով:
Խեղճ ձագերը այսչափ խինդէն կը գինդման,
Քանզի զըտին մէծ բարեկամ,
Եւ այժմ ի սպառ են երջանիկ.
Այս է նոցին նստուտ կարծիք:
Բայց կու գար մի ծեր նապաստակ՝ կ'անցնէր
(անկէ,
Եւ վագելով՝ փախէք, կ'ըսէր, փախէք առկէ.
Հա ձեր ոտքին տակ փորում է ձեզ գերեզման:
Խրատ յոյժ բարի, այլ անօգուտ ե անազան:
Երկու զըժբաղդ ձագուկները կ'ուզեն փախչիլ,
Բայց աղուէսը փութաց անոնց վըրին կըպչիլ.
Եւ որպէս զի դատ մը տայ ձեզ որ չըլլայ սին,
Փըլըհց անոնց ոտքերուն:
Դուք դեռատի անփորձ տղելք,
Ընկերութեան մէջ որ մըտնէք,
Շըրջապատուած էք յարածամ
Դառնազգեստ շատ գայլիւրէ,
Կեղծելու վարժ աղուէսներէ,
Երեսանց լաւ՝ չար մարդկանէ:
Թող ձեր մըտքէն չ'ելլէ յայնժամ,
Թէ ձեզ համար ամէն բանն
Շատ աւելի վախնալ պէտք է
Ասանկ օտար ձեզ անձերէ:

Dorat. ՍՏԵՓԱՆ ԽԱՇՁԱՆԱ